

# SheCan Գարնանային շրջան

Բյուջե

## Նպատակը

Ayo!  Հարթակը համագործակցելով GITC-ի հետ՝ իրականացնում է SheCan ծրագիր, որի նպատակն է աջակցել  կանանց հիմնելու իրենց ձեռնարկատիրությունները՝ վերածելով իրենց հմտությունները եկամտաբեր բիզնեսի՝ կենտրոնանալով բիզնեսի, մարքեթինգի և ֆինանսների հիմնական կարողությունների զարգացման վրա:

## Նկարագրություն

Այս նորարար ծրագիրը միտված է աջակցելու  կանանց՝ մեծամասամբ  միայնակ մայրերին  կամ Արցախից տեղահանված անձանց՝ զարգացնելու իրենց բիզնեսը: Ծրագրի նպատակն է եռամսյա ժամկետում  մասնակիցներին տրամադրել գիտելիքներ և գործիքներ՝ իրենց ձեռնարկությունները հիմնելու և զարգացնելու համար: Դասընթացը ներառում մոդուլներ բիզնես պլանավորման, բյուջետավորման ու գնագոյացման ռազմավարության, թվային մարքեթինգի, բրենդինգի և շատ այլ թեմաների մասին:  Մասնակիցները հնարավորություն ունեն ստանալու դրամաշնորհներ, որոնք կնպաստեն իրենց բիզնեսի զարգացմանը:

Մեկ կնոջ մասնակցության արժեքը $500 է:

Շիրակի մարզը ը շարունակում է մնալ Հայաստանի տնտեսապես  ամենատուժած շրջաններից մեկը՝ աղքատության և գործազրկության ցուցանիշներով: Դրանք անհամեմատ բարձր են  ազգային միջին ցուցանիշներից: 2020 թվականին աղքատության մակարդակը հասնում էր 48.4%-ի, իսկ երեխաների աղքատությունը՝ 57.7%-ի, ինչը համակցված է 1988 թվականի երկրաշարժի երկարաժամկետ հետևանքների հետ:

Չնայած այս մարտահրավերներին, Գյումրին փորձում է հաղթահարել դժվարությունները: ՀՕՖ-ի կողմից 2005 թվականին հիմնադրված GITC-ն կարևոր դեր է խաղացում այս գործընթացում: Թեև կենտրոնը սկզբնապես մասնագիտացած էր տեխնոլոգիական կրթության մեջ, այժմ այն ընդլայնում է իր առաքելությունը՝ ներառելով ձեռնարկատիրության զարգացում: Կանանց աջակցելով իրենց հմտությունները վերածելու բիզնեսի, GITC-ն նպաստում է աշխատատեղերի ստեղծմանը, ընտանիքների ամրապնդմանը և տարածաշրջանի տնտեսական դիմացկունության բարձրացմանը:

INFORMATION
TECHNOLOGIES
CENTER

## Բյուջե

| Դասի անվանում | Ամսեկան ժամ | Ժամավարձ (AMD) | Ապրիլ | Մայիս | Հունիս |
|---|---|---|---|---|---|
| Կանանց տրանսպորտ | – | – | 100,000 | 100,000 | 100,000 |
| Բիզնեսի զարգացում | 8 | 15,000 | 120,000 | 120,000 | 120,000 |
| Մարկետինգ և վաճառք | 8 | 15,000 | 120,000 | 120,000 | 120,000 |
| Art of Pitching | 8 | 15,000 | 120,000 | 120,000 | 120,000 |
| Ներկայացումային հմտություններ | 8 | 15,000 | 120,000 | 120,000 | 120,000 |
| Տնտեսագիտություն ոչ ֆինանսիստների համար | 8 | 15,000 | 120,000 | 120,000 | 120,000 |
| ԿԱՆԱՆՑ ԳՐԱՆՏՆԵՐ | – | – | – | – | 3,000,000 |

**Ընդհանուր**

Փոխարժեք՝ *1* ԱՄՆ դոլար = *380* ՀՀ դրամ

# ֏3,700,000